



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





**1667**

2153

1163

~~181440~~



1340.



ՆՐԱԿ  
ՀՈԳԻՒՈՅ

Ես լոյս յաշխարհ եկի, զի  
ամենայն որ հաւատայ  
յիս՝ ՚ի խաւարի մի  
մնացէ: Հով. ԺԻ՝ 46:



Ի ՕՄԻՒՌՆԻՆ

Տպագրու թիւանք  
Հովան Հալլօքի:

1839



1667

102





## ՃՐՆԳ ՀՈԳԻՈՅ:

Քրիստոնէին հարկաւորապէս պէտք է ինչը-  
զինչը յննել, իր գործերը Քրիստոնէ  
պաշտօնէրնէրուն հետը համեմատութեամբ  
Բողոքապետի:

Յարգի՛ Բարեկամներ ու եղբայրներ:

Անրեցէք ինձի, որ ձեզի քանի մը խորա-  
տական խօսքեր պիտի զրուցեմ Պօղոս ա-  
ռաքեալին խօսած նիւթին վրայովը, որ կը-  
սէ ք. Արնի. ԺԴ. 5. «Ինքըզինքնիդ փորձի  
դրէք թէ ան հաւատքին մէջը կեցե՞ր էք  
մի: Ընձերնիդ քննեցէք, դուք ինքի-  
րէննիդ չէ՞ք մի գիտեր թէ՛ Յիսուս Քր-  
իստոս ձեր մէջն է. բայց թէ որ չէ՛նէ՛ ան-  
պիտան կը լլաք դուք»:

Ըս խօսքէն կը սորովինք մենք թէ՛ մար-  
դիկները կարելի է որ երբոր հաւատք չու-  
նին՝ կը սորհին որ նոյն Քրիստոսի հաւատ-  
քին մէջն են. այսինքն՝ Սէկ մարդ մը կրնայ  
իր վրայովը խորհիլ թէ՛ ինքը մէկ հաւա-

տացեալ մըն է, կամ Վրիստոսի հետևող  
մէկ մըն է, երբոր ինքը ճշմարտիւ անանկ չէ  
նէ: Ինքը անու՛նով Վրիստոնեայ մը կրնայ  
ըլլալ, բայց ճշմարտ Վրիստոնեայ չէ:

Ըստ կերպ ըլլալը ան խօսքէն ալ քաջա-  
յայտ է, որ Տէրը Սարգիկեցոց եկեղեցիին  
առաջնորդին զրուցեց. «Աննդանիի անուն  
ունիս դուն, բայց մեռած ես»: Հայտ. 7. 1:  
Նաև յայտնի է Վրիստոսի խօսքերէն, որ  
կըսէ. «Ետեքը ան օրը ինձի պիտի ըսեն,  
Տէր Տէր՝ մենք քու անունովդ մարգարէու-  
թիւն չըրի՞նք մի, ու քու անունովդ գէւեր չի  
հանեցի՞նք մի, և քու անունովդ շատ հրաշք-  
ներ չըրի՞նք մի: Բայց ես անատեն պիտի  
զրուցեմ անոնց թէ Վ՛մենեին ես ձեզ չեմ  
ճանչնար. քովէս մէկ դի կեցէք դուք ամէն-  
քրդ որ անօրէնութիւն գործեցիք»: Ստ. 1.  
Է. 22. 23: Վ՛հասա զրուցածները ան մար-  
դոցը համար են, որոնք աս աշխարհիս մէջ  
կրխոստովանին թէ իրենք Վրիստոսի ա-  
շակերտն են, և կրխորհին թէ աս կերպով  
հետևապէս իրեն փրկութեան ճանապար-  
հին մէջն են: Բայց Վրիստոս անոնք չի  
գիտեր ու չի ճանչնար որ իրն են, և անոնք  
ինքը ան օրը չի պիտի խոստովանի թէ իրենն  
են: Վ՛լ անատեն անոնք իրենց յոյսէն պիտի  
զրկըվին: Վ՛ ինչպէս սոսկալի պիտի ըլ-

լայ աս յուսահատութիւնը , որ մենք ակընկալութիւն ունենանք մեր բոլոր կեանքին մէջը՝ թէ մենք պիտի ընդունելի ըլլանք Վրիստոսի առջևը , ու պիտի փրկուվինք . բայց վերջը ատանկ անարգութիւնք՝ ու դուրս ձգվինք իր դիմացէն յաւիտեանս :

Կերևայ թէ Պօղոս ալ իր վրայոյժը քիչ մը վախ ունէր՝ թէ վերջին օրը Վրիստոսի դիմացէն մէկ դի պիտի ձգվի . անոր համար կրճրուցէ թէ , “ Եւ մարմինս նեղը կրխօթեմ ” ու հնազանդութեան տակ կառնեմ , որ չըլլայ թէ մէկ կերպով մը՝ ես որ ուրիշ ներուն քարոզեցի , ինքիրմէս անպիտան մէկ մը ըլլամ ” : Թ . Կորնթ . Թ . 27 :

Շատ մարդիկ որ ինքրզինքնին Վրիստոնեայ կրկոչեն , կերևայ թէ այնչափ է վերջը չեն խորհիր աս նիւթին վրայով . կամ չեն գիտեր որ ինքրզինքնին խաբելու շատ վտանգ կայ : Բայց իրաւցրնէ վտանգ կայ : Թէ որ անանկ չէ նէ , ինչո՞ւ համար Առաքեալը Կորնթացի Վրիստոնեաները կը յորդորէ որ՝ ինքրզինքնին քննեն : Հիմայ որովհետև կարելի է որ մարդս խաբվի , ինչպէս որ Տէրը մեզի կրճրուցէ որ շատերը խաբված են և վերջին օրը յոյսերնուն պիտի զրկուվին , ասոր համար Պօղոսին խրատին մենք ալ մտիկ դնենք , և քննենք ինքրզինք-

նիս ազէկ ջերմեռանդու թիւնով մը : Չ աւք  
ընենք՝ որ ան խնդիրը ստուգենք թէ ար-  
դեօք մենք նոյն հաւատքին մէջն ենք թէ չէ :  
Ընդհանրապէս ան՝ որ մարդուս սիրտը կը-  
քննէ , մեզի օգնէ իր Սուրբ Հոգիովը , որ  
կարենանք ճշմարտապէս ինքրզինքնիս  
քննելու :

Պինտ առաջ մենք նայինք՝ որ ան Վրիս-  
տոսի հաւատքին մէջը ըլլալը ինչ է . և ամե-  
նէն առաջ աս ցուցընենք թէ՛ Սոսկապէս  
ճշմարիտ կրօնքը խոստովանիլը ան հաւատ-  
քին մէջ եղած ըլլալը չի ցուցըներ : Աորըն-  
թոսի մէջ եղող ժողովուրդը՝ որոնց որ Պօ-  
ղոս աս խօսքը ըսաւ , իրենք գիտէին և խոս-  
տովաներ էին Վրիստոսի կրօնքը . լսեր էին  
անոնք Մեծարանին քարոզութիւնները  
նոյն Մատթեայէն . բայց տակաւին “Մնայի-  
տան” ըլլելէ լու վտանգին մէջն էին : Թէ որ  
ան ամէն ճշմարիտ կրօնքը խոստովանողնե-  
րը ու ինքրզինքնին Վրիստոնեայ կանչող-  
ները , նոյն հաւատքին մէջը եղած ըլ-  
լային և անանկով ապահով ըլլային նէ ,  
հարկ չէր անանկ մարդոցը որ ինքրզինքնին  
քննեն նային :

Արկրորդ . Սոսկապէս մկրտըված ըլլալը  
նոյն հաւատքին մէջը եղած ըլլալը չի ցուցը-  
ներ : Աորնթացի Վրիստոնեաները ամէնքը

մկրտը ված էին, անոր վրայ իրենց հարցում մը կամ խօսք մը չի կար: Պօղոս անոնց կրկանչէ թէ՛ ինքը զինքնին քննեն նային, չէ թէ անոր համար որ՝ մկրտը ված են միարդեօք, հապա որ նոյն Վրիստոսի հաւատքին մէջն են մի: Աւտի կրնայ ըլլալ որ, մէկ մարդ մը մկրտեալ ըլլայ՝ ու Վրիստոսի հաւատքին մէջը եղած չըլլայ, կրնանք որ մենք մկրտեալ ըլլալովնիս ճշմարիտ Վրիստոսեաներ եղած չըլլանք. կրնանք որ մենք մկրտեալ ըլլալովնիս՝ տակաւին ապահով եղած չըլլանք: (Թ)է որ բոլոր բանը մկրտութեան վրայ եղած ըլլար, թէ որ մը կըրտութիւնը ամէնէն մեծ բանը եղած ըլլար, Մուսքեալը ասանկ չի պիտի մի զրուցեր թէ՛ ինքը զինքնիդ քննեցէք նայեցէք թէ մկրտը ված էք մի:

Երրորդ. Հաղորդութիւն առնելը զցուցընէր նոյն հաւատքին մէջ ըլլալը:

(Թ)է որ ասանկ եղած ըլլար, Պօղոս պիտի զրուցէր թէ՛ Հաղորդութիւն առիք մի:

Չորրորդ. Մը կամ ան եկեղեցիէն ըլլալն ալ չի ցուցընէր նոյն Վրիստոսի հաւատքին մէջ ըլլալը: Չոր օրինակ շատ անգամ կը լսենք թէ մարդիկնեքը կըսեն, Մենք էջունաց եկեղեցիէն ենք, ճշմարտութիւնը միայն մեր քովն է. կամ՝

Ս'ենք Վատինացոց եկեղեցիէն ենք, մե'րը շիտակ է. կամ՝ Ս'ենք Հայ ենք, կամ Մ'նգ-ղեացի ենք: Կորնթացոց մէջն ալ ասանկ եղաւ. ոմանք կըսէին թէ՛ ես Պօղոսեան եմ. ոմանք՝ ես Մարտիրոսեան եմ. ուրիշները՝ ես Պետրոսեան եմ: Բայց Մուսքեալը աս կողմնական հոգիին համար սաստիկ կշտամբեց անոնք: Ինքը ըսաւ անոնց թէ՛ մարմնաւոր են:

Բանը անոր վրայ չէր՝ թէ՛ իրենք Պետրոսի հետևող են, եթէ Պօղոսի, կամ թէ՛ Մարտիրոսի, հապաոր՝ իրենք Վրիստոսի կը հետևի՞ն կոր մի: Բանը անոր վրայ էր որ, իրենք ճշմարտապէս Վրիստոսի հաւատքին մէջն են՝ թէ՛ չէ:

Հիմայ ասոնք մէկգի ձգենք. գանք մեր ան առջի հարցումին՝ թէ, Ինչ է նոյն հաւատքին մէջ եղած ըլլալը. կրպատասխանեմ թէ՛ Վրիստոսի վրայ ճշմարիտ հաւատք ունենալն է. և ճշմարիտ Վրիստոնեայ ըլլալ՝ ու Վրիստոսի ճշմարիտ աշակերտը ըլլալն է:

Գանք որ հիմայ աս ամենահարկաւոր խնդիրին վրայով ծուռումուռ առումներ չունենալու համար՝ երթանք նոյն ինքն Վրիստոսին՝ որն որ անսխալելի Ասուցիչ մըն է, մէկ պատասխան մը առնելու համար

իրմէն : Արբոր ինքը աշխարհիս վրայ էր մարմնով, իր աշակերտներուն յայտնի սորվեցուց թէ ինչ բան հարկաւոր էր իրեն աշակերտը ըլլալու համար : Ինքը սորվեցուց անոնց՝ որ աստիւթին վրայով ծուռումուռ առումներէն զգուշ ըլլան : Ինքը բոլոր մարդիկ պարտաւորեց որ զգուշ ըլլան ինքքդինքնին իր աշակերտները ըլլալ խոստովանելէն, և այնպէս խորհելէն՝ երբոր ճշմարտապէս անանկ չեն :

Իր կանոնը՝ որ մեզի տրւաւ, ասիկա էր. « Թէ որ իսկըսիրէք նէ իմ պատուէրներս պահեցէք : Եւ որ իսչի սիրեր, իմ խօսքերըս չի բռներ » : Հով. ԺԳ. 15. 24 : « Թէ որ մէկը կուզէ իմ աշակերտս ըլլալ, թող իր անձը ուրանայ, և իր խաչը առնէ՝ ու իմ ետեւս գայ » :

Եւ տըւած կանոնը պարզ ու դիւրաւ միտք առնելու է. տղայ մըն ալ կրնայ հասկընալ աս. քանզի մէկ ծառայ մը որ ճշմարտապէս կըսիրէ իր տէրը, իրաւամբք պիտի քանք ընէ՝ որ անոր կամքին հաճոյ եղածը ընէ : Այիտի հնազանդ ըլլայ անոր զրուցածներուն, և հաւատարիմ պիտի ըլլայ անոր ստացուածքին վրայ : Այլ մէկ տղայ մը՝ որ իր ծնողքը կըսիրէ, բնապէս և կամաւորապէս անոր կըհնազանդի, ու անոր ուղածին պէս

կրնէ : թէ որ մենք տեսնանք մէկ տղայ՝ կամ  
մէկ ծառայ մը անհնազանդ գտնուված , իս-  
կոյն կրմակարեբրենք որ անոնք սէր չունին :

Ընանկ էնէ եկէք՝ քիչ մը մտմըտանք մենք  
Վրիստոսի ան գլխաւոր պատուէրներուն  
վրայ , և տեսնանք թէ՛ մենք կրպահենք կոր  
մի անոնք՝ թէ չէ : Այլ աս կերպով մենք պի-  
տի կարող ըլլանք որոշելու՝ թէ ճշմարտա-  
պէս իր աշակերտն ենք մի , թէ չէ :

Մ . Ըն պատուէրներուն մէկը՝ որ Յիսուս  
լեռանը վրայ իր տըւած քարոզներուն մէջը  
զըուցեց , աս է . “Պինտ առաջ դուք Մատու-  
ծոյ թագաւորու թիւնը և իրեն արդարու  
թիւնը խնդրեցէք” : Ստու . զ . 33 : Ըս-  
խօսքը կըցուցնէ մեզի որ՝ մեր առաջին ու  
գլխաւոր ջանքերնիս կամ փախաքնիս աս  
պիտի ըլլայ , որ խնդրենք Մատուծոյ թա-  
գաւորու թիւնը մտնալ , կամ ուրիշ կերպով  
խօսիմ , երկինքը երթալու համար պատ-  
րաստ գտնուվիլ : Մեր Քրկիչը ան խօսքով  
պայծառապէս ու որոշաբար սորվեցուց , որ  
մարդուս հոգին անմահ է . որ ան պիտի մնայ  
մինչև յաւիտեան կամ Արկինքին մէջը՝ կամ  
Պատիւքին մէջը . և աս հոգին է անիմանալի  
էակ մը՝ և մարմինէն էվելի պատուական :  
Սուտի ինչ օգուտ կունենայ մէկ մարդ մը ,  
թէ որ բոլոր աշխարհը վաստըկի , ու իր հո-  
գին վնաս քաշել տայ նէ : Ստու . Ժ . 26 :



Վանք որ մեր միտքը ինքիրմէն մեզի կը-  
 օտրվեցունէ թէ պարտինք մենք պինտ ա-  
 աջ և գլխաւորապէս ամենահարկաւոր բա-  
 ներուն ետեէն խնալ : Օր օրինակ , մար-  
 դուս էվելի հարկաւոր է մէկ մարդըրիտի մը  
 վրայ հոգ ունենալ՝ քան թէ երկաթի կտորի  
 վրայ : Այլևի՛օք հարկաւոր է մէկ մարդու մը  
 կեանքը խալըսել , քան թէ մէկ ճնճղուկի  
 մը կեանքը : Իմայ ամէն մարդ կրնայ իմա-  
 նալ թէ էվելի՛օք հարկաւոր է ամենեին չի  
 մեռնող հոգիին աղէկ ըլլալուն վրայ հոգ  
 քաշել , քան թէ մարմինին , և էվելի հարկա-  
 ւոր է խալըսել մէկ աշխարհ մը՝ քան թէ մէկ  
 մասնաւոր անձ մը : Ալ որովհետեւ Քրիս-  
 տոս մեզի սասանկ յայտնի զըուցից որ , հո-  
 գին ան կենդանի ներգործող էակը ամե-  
 նեին պիտի չի մեռնի , և ասոր համար մէկ  
 աշխարհէ մը էվելի արժէք ունի ան , և ո-  
 ղովհետեւ մենք անանկ միտք ունինք , որով  
 կրնանք որոշել թէ որը պատուական և որը  
 անարդ է , առանց մէկ յատուկ պատուերի  
 մըն ալ յոյտնի է աս բանը որ՝ պէտք է մե-  
 զի մեր հոգինն բուն փրկութիւնը փնտրուել  
 անանկ մեծամիտապիտք փութութով մը , որ մար-  
 մինին ապրիլը փնտրուելնէս կամ աշխար-  
 հիս բարութիւնները վաստակելու համար  
 ըրած ջանացողութիւններնէս աւելի ու-

լայ : Աստի որչափ աւելի պայծառ է աս ,  
 որ ինքը կը պատուիրէ մեզի թէ , “ Պինտ ա-  
 աջ Աստուծոյ թագաւորութիւնը և անոր  
 արդարութիւնը խնդրեցէք ” : “ Չ անացէք  
 որ նեղ դուռնէն ներս մտնաք ” : Վ. Կ. Ժ. Գ .  
 24 : Այլ որ ինքը բացայայտ կերպով կրկին  
 կրկին մեզի կը հասկըցունէ թէ մեծ վտանգ  
 կայ , որ մեր հոգիքը պիտի կորստվին : “ Աեղ  
 դռնէն մտէք . ինչու որ լանվարձակ է դու-  
 րը ու համարձակ ան ճամբան՝ որ դէպ  
 ’ի կորուստը կը տանի , ու շատերը կան՝ որ  
 անկէ կը մտնան : Ինչու որ նեղ կուկ է դու-  
 րը , ու նեղ վածք է ճամբան որ դէպ ’ի կեան-  
 քը կը տանի . ու քիչ որ են անոնք՝ որ ան  
 կը գտնան ” : Մատթ . է . 13 . 14 :

Կանք որ հիմայ աս բանին մէջ մենք ին-  
 քը ինքնիս քննենք նայինք . մենք մեր հո-  
 գիներնուս փրկութիւնը մէկ հարկաւոր  
 բանի մը պէս փնտրուելու ետեւէ կը լլանք  
 կոր մի :

Կարգացող , քու գլխաւոր հոգդ է՞ մի  
 քու յաւիտենական ճոխութիւնդ ապահո-  
 վագէս ձեռք ձգել ունենալը : Կուն կը  
 խորհի՞ս մի է վելի հոգիիդ վրայ քան թէ  
 մարմինիդ : Ամէն բանէն առաջ դուն Աս-  
 տուծոյ թագաւորութիւնը կը խնդրե՞ս մի :

Սիրելիք , մեջերնիս արդեօք հարուրին

մէջը մէկ մարդ մը կրգանըվի՞ մի , որ աս  
պատուէրին հնազանդի , ամսոս , կրվախ-  
նամ թէ չի կայ :

Մարդիկները՝ կերևայ որ աս ալ չեն  
գիտերկոր թէ , իրենք անմահ հոգի ունին .  
և աս ալ շատ քիչ գիտեն՝ որ իրենց հոգին  
յաւիտեանս կորսուելու վտանգին մէջն է :  
Երբոր մէկ մարդ մը հիւանդ է ու նեղու-  
թեան մէջ , և կրվախնայ թէ ինքը մեռնելու  
վրայ է , բան մը կրնէ . ( ուտով մէկը կը-  
խրկէ բժշկին , ու դեղ կառնէ :

Ասանկ ալ անշուշտ՝ թէ որ դուք գիտէք՝  
ու կրհաւատաք , որ ձեր հոգին տկարացած  
է , ու յաւիտենական մահուան վտանգին  
մէջը , օգնութիւն ընելու համար պէտք է որ  
Յիսուս Քրիստոսին երթաք՝ ան մեծ ու  
մէկ հատիկ վարպետ բժշկին , որ ձեզի փրկ-  
կութիւն ըլլայ : Բայց որչափ քիչ են ա-  
նոնք , որ աս ըսածիս պէս իրենց պարտք սե-  
պեն հոգեդէն փրկութեանը վրայով հոգ ու-  
նենալը : Արչափ քիչ են անոնք՝ որ Քրիս-  
տոսի աս պատուէրին հնազանդին , ու ա-  
մէն բանէն առաջ Աստուծոյ թաղաւորու-  
թիւնը և անոր արդարութիւնը խնդրեն :  
Բայց սիրելիս՝ թէ որ մենք աս բանին ան-  
հնազանդ ըլլանքնէ , ի՞նչպէս կրնանք իր  
աշակերտները ըլլալ :

բ. Վրիստոսի միւս պատուէրը իր աշակերտներուն աս էր որ, իրենք մէկըզմէկ սիրեն. “ Մէկ նոր պատուէր մը ըսաւ ինքը, կուտամ ես ձեզի, ան որ դուք մէկըզմէկ սիրէք” : (Յոհ. ԺԳ. 34 : Այս աս փոխադարձ սէրը էր, և ոչ ուրիշ մէկ բան մը, որ բոլոր աշխարհին պիտի ցուցնէր թէ անոնք ճշմարտապէս իր աշակերտներն էին, և որ իր կրօնքը ճշմարիտ էր : Վանզի ինքը ըսաւ, “ Ըսով ամէն մարդիկ ձեզ պիտի ճանչնան որ իմ աշակերտներս էք, թէ որ մէկըզմէկու վրայ սէր ունենաք նէ” : Վրիստոսն իր մաղթողական աղօթքին մէջ աւանց համար ասանկ ըսաւ, “ Որ անոնք մէկ ըլլան ինչպէս մենք մէկ ենք . . . Որ աշխարհ աղ հաւատայ որ դուն իս խրկեցիր” : (Յոհ. ԺԷ. 11. 21 :

Իանք որ հիմայ մենք որ Վրիստոսնայ կրկոչվինք, տեսնանք թէ ճշմարտապէս մէկըզմէկ կրսիրենք կոր մի աս պատուիրանքին համաձայն : Զրեաները ու Տաճկրները մեր սէրը կը տեսնան կոր մի. և անանկ իրենք ընդունելու կը ըլլան կոր մի որ մենք Վրիստոսի աշակերտներն ենք. ու աս պատճառաւ մեր Արկնաւոր Զայրը կը փառաւորեն կոր մի : Իրենք կը զրուցեն կոր մի հնչպէս ժամանակ մը Զեթանոսները

կրսէին Վախնի Վրիստոնէից համար ,  
 «Տեսէք՝ ինտոր աս Վրիստոնեաները մէ-  
 կըզմէկ կըսիրեն» : Բայց ընդ հակառակը  
 չեն մի տեսնարկոր անոնք մեր իրարու դէմ  
 ատելութիւն ունենալը :

Յոյները Վատիններուն դէմ հակառա-  
 կութիւն ունենալով , և Վատինները Հա-  
 յերուն դէմ հակառակախօսութիւն ընե-  
 լով , իրարու վրայ ատելութիւն և արհա-  
 մարհութիւն չեն ցուցրներ մի :

Ուստի անոնք Վրիստոսի աշակերտներ  
 կրնան մի ըլլալ , որ ասանկ ատելութիւն-  
 ճեր կունենան իրարու դէմ , և ասանկ  
 անհաւատներուն հայհոյանք խօսելուն  
 պատճառներ կըլլան :

Եսանկով կրնան մի ըլլալ անոնք Վր-  
 իստոսի հաւատքին մէջը , կամ թէ անոնք  
 Վրիստոսի աշակերտներն են մի :

Վանք որ՝ չէ թէ միայն զանազան ե-  
 կեղեցիներէ եղող Վրիստոնեաները մէ-  
 կըզմէկ կատեն աս կերպով , հապանակ մի  
 և նոյն եկեղեցիէ եղողներն ալ աս կերպով  
 մէկմէկու թշնամութիւն կամ վնաս կը-  
 նեն : Ուրեմն նոյն բանը ճշմարիտ է հիմայ  
 ալ , որուն համար որ Պօղոս գանգատ կը-  
 ճէր Երբեմն իր ժամանակովը , ու կրսէր .  
 « Եղբայր եղբօրը հետ կռիւի կրմանայ ,

Եղբայր եղբայրը դատաստանի կըքաշէ ,  
 ան ալ՝ անհաւատներուն առջևը” . Թ .  
 Կորնթ . Գ . 6 : Ըստանին համար Մտաքեա-  
 լը կըլսանդիմանէ անոնք՝ ըսելով . “ Ինչո՞ւ  
 դուք զրկանք չէք քաշեր՝ և դուք էվելի  
 ինքրզինքնիդ նեղը չէք խօթեր : Զապա՞  
 դուք ուրիշի զրկանք կրնէք , ու վնաս քա-  
 շիլ կուտաք . ան ալ՝ բուն ձեր եղբայրնե-  
 րուն” . Թ . Կորնթ . Գ . 7 , 8 :

Մեր Տէրը պատուիրեց թէ , մէկըզմէկ  
 սիրեցէք ինչպէս որ ես ձեզ սիրեցի : Յոհ .  
 ԺԵ . 12 : Գանք որ՝ ինքը սիրեց իր Ժողո-  
 վուրդները անչափ շատ մինչև որ իր կեան-  
 քը անոնց համար մեռնելու դրաւ : Յոհան-  
 նէս առաքեալն ալ աս խօսքին վրայ մեզի  
 կըզրուցէ թէ , “ Մենք ալ պէտք է որ մեր  
 եղբայրներուն համար կեանքերնիս դը-  
 նենք” Թ . Յոհ . Գ . 16 : Զիմայ՝ աս բանը ընելու  
 յօժարութիւն ունի՞նք մի մենք : Մեր եղ-  
 բայրներուն համար նեղութիւն քաշելու  
 կամաւոր ենք մի : Կամ ընդ հակառակը ա-  
 նոնց նենգութիւն չե՞նք ըներ մի , և մեր ան-  
 ձին օգուտները յաջողվելու համար անոնց  
 սուտ չե՞նք մի խօսիր :

Թէ որ ասանկ էնէ՞ մենք կրնա՞նք Վր-  
 րիստոսի աշակերտները ըլլալ :

Ըսկէց՝ ի զատ ան մեզմէ պահանջած սէ-

որ անկեղծ և անխարդախ պիտի ըլլայ : Մե  
նոյն սէրը սոսկ վայելչագեղ խօսքերու  
մէջ և զըւարթերես դէմքի մը վրայ հաս-  
տատուած չի պիտի ըլլայ , հապա պէտք է  
որ ըլլայ ներսը սրտին մէջ հաստատուած ,  
ինչպէս կրտէ Պետրոս առաքեալ . “ Սուրբ  
սրտով մէկըզմէկ անկեղծութեամբ սիրե-  
ցէք ” : Թ . Պէրր . Թ . 22 :

Գանք որ որչափ շատ անգամ կը լսենք  
մենք՝ որ մէկ մարդ մը կրխոստովանի թէ  
ինքը մեծ սէր ունի ուրիշին վրայ , երբոր  
իր սրտովը անիկա ատելու կը ըլլայ : “ Մենք  
որ իրենց եղբայրներուն հետ խաղաղու-  
թիւն ունինք կրտէ , իրենց սրտերնուն մէ-  
ջը չարութիւն կայ ” : Սուրբ . իէ . 3 : “ Օյն-  
կրներ՝ կրտէ Յոհաննէս առաքեալը , չէ թէ  
խօսքով ու լեզուով (մէկըզմէկ) սիրենք ,  
հապա գործքով ու ճշմարտութիւնով ” :  
Թ . Յոհ . Գ . 18 :

Գ . Սեր Տերօջը պատուէրներուն մէկն  
ալ աս է , “ Սիրեցէք թշնամիներնիդ ” :  
Սուրբ . Ե . 44 : “ Լսեցէք որ զբուցված էք  
թէ պիտի սիրես քու ընկերդ , ու պիտի ա-  
տես թշնամիներդ : Լսոյց ևս ձեզի կրտէմ ,  
Թշնամիներնիդ սիրեցէք . օրհնեցէք ձեզ  
անիծողները , ու աղօթք ըրէք անոնց հա-

մար որ ձեզինն զուժիւն կուտան ու կըհա-  
լածեն ձեզ” : Ստոր. Ե. 43 , 44 :

Վիւրիւն բան է սիրել անոնք որոնք որ  
մեզ կըսիրեն . Վայց դժար բան է ան որ  
մեզ ատողները սիրենք : Սակայն որչափ  
դժար է նէ ասանկ է պատուէրը , ու մենք  
անոր պիտի հնազանդինք : Եւ ան է որ  
Վրիստոս ինքը ըրաւ . և աս ամէն մարդիկ  
պէտք է որ ընեն , որ իր աշակերտները ըլ-  
լան : Պետրոս առաքեալը կըսէ թէ , “ Ինչ  
բարիք մըն է ան թէ որ երբ մեզք գործել-  
նուդ համար տանջուիք՝ ու համբերէք նէ ,  
ըսյց թէ որ երբ բարիք գործէք՝ ու չար-  
չարուիք՝ և անոր համար համբերեք նէ , ան  
Եստուծոյ առջև ընդունելի է : Ինչու որ  
աս բանին համար կանչուիցաք դուք . Ա-  
րովհետև Վրիստոս ալ մեզի համար ( նե-  
ղուժիւն քաշեց ) մեռաւ , ու մեզի օրինակ  
մը թողուց որ մենք իր օտքին քայլերուն ե-  
տեէն երթանք” : Կոր. Գ. Բ. 20 , 21 :

Հիմայ՝ Վրիստոնեայ կարգացող , գուն  
իր քայլերուն աս բանին մէջ կըհետևի՝ սկոր  
մի , եթէ քեզի կանոն ըրեր ես քեզ սի-  
րողները միայն սիրելու , և քեզ ատողները  
ատելու : Երբ գուն կընախատուիս նէ , ունդ  
անոնք կընախատես՞ս մի : Վեզ անիծողնե-  
րուն փոխարէն՝ գուն ալ անոնք կանիծե՞ս



Մի : Աս կերպով չըրաւ ինքը՝ որ ամէնուն Տէրն էր , հապս ինքը իր հալածիչներուն համար աղօթք ըրաւ , և առաջին Վրիստոնեաները աս կերպով իր ճամբային կը հետեւէին . ինչպէս Պօղոս կըսէ . “ Արանիս գէշ կը դուրս ելնէ , մենք իրենց օրհնէնք կը կարդայինք . կը հալածէին , մենք կը ընդունէինք ան . կը հայհոյէին ( թշնամութիւն կը նշնէին ) , մենք աղաչանք կը ընէինք ” : Թմ . Կորնթ . Գ . 12 , 13 : Եւ ուրիշ տեղ Պօղոս բացառապէս կերպով կը պատուիրէ մեզի “ ( ) օրհնելու չէ թէ անիծել ” . Թմ . Ժբ . 14 : Սերմն թէ որ մենք Վրիստոսի օրինակին ու անոր առաքեալներուն չի հետեւինք , և անոնց պատուէրներուն չի հնազանդինքնէ , մենք Վրիստոնեայ չենք :

Հիմայ մենք աս քաղաքին բնակիչներս՝ որ Վրիստոնեայ կը սովինք , նայինք մեր վարքին : Չէ որ մենք գրեթէ ամէնքնիս մեծ ու պշտիկ մեր թշնամիները կատենք կոր ու կանիծենք կոր : Արողութիւն կուտանք կոր մի մենք մեզի դէմ եղած անիրաւութիւններուն : Ի՞նչ որ մարդ մը մէկ օր եօթն անգամ յանցանք ընէ , անոր կը ընենք կոր մի Վրիստոսի պատուէրին ու տըւած օրինակին համեմատ : Սերիչները մեր անձին պէս կը սիրենք կոր մի . զոր օրինակ ուրիշ եկե-

ղևցիէ և զողնները կըսիրենք՝ նք կոր մի : Այլ թէ որ մենք անոնք կըսիրենք կոր ալ նէ , բայց Տաճկընները ու Հրեաները չենք ատեր կոր մի : Հիմայ սիրելիք , մեզի պէտք է որ ամէն մարդ սիրենք , ու ամէնուն աղեկութիւնը նենք : Անզի պէտք է որ ամէն մարդոց համար ազօթք ու աղաչանք և մաղթանք ընենք Մատուծոյ . ինչու որ ան է մեր Վրկէ՛չ Մատուծոյ առջևը աղէկ ու ընդունելի : Տե՛ս Վատը . Դ . 10 . և Թ . ՏԵ՛՛ . Բ . 1—3 :

Դ . Վրիստոսի մէկ ուրիշ պատուէրը ան լեռանը մը այտը ամ իր քարոզին մէջը և զամ՝ աս է , որ մենք պարտինք ուրիշներուն անանկ ընել՝ ինտոր որ մենք կուզենք թէ ուրիշները մեզի ընեն : Ատըլ . Է . 12 :

Մտէ Պողոսին ըսած սէրը , որ օրէնքին կատարումն է : Հատ . ԺԴ . 10 : Մտէ օրէնքին ան երկրորդ մեծ պատուէրը՝ որ մեզմէ կը պահանջէ ըսելով , «Պիտի սիրես սքու ընկերդ . քու անձիդ պէս» :

Այլ է որ ամէն մարդիկ աս պատուէրը իրենց սրտերուն մէջը անջնջելի կերպով մը դրելու ըլլային , ու անոր պէս երթալու ըլլային . և անատեն ի՞նչ մէկ երջանիկ աշխարհ մը պիտի ըլլար աս աշխարհը : Այլ թէ որ Վրիստոնեաները բռնէին աս պատուէրը նէ , ինչ մէկ երջանիկ ընկերութիւն մը

ուննցած պիտի ըլլային իրենք: Ա՛լ անա-  
տեն բոլոր ատելու թիւնը, նախանձու թիւ-  
նը, չարութիւնը, բարկութիւնը, չարախօ-  
սութիւնը, ստութիւնը, ամբարտաւանութիւնը,  
գողութիւնը, պղծութիւնը, և այլն,  
ասոնց բոլորը պիտի վերջ ըլլար: Ա՛լ անա-  
տեն չի պիտի ըլլար մէկմէկու դէմ խաբէութիւն  
ընել, անէծք խօսիլ, և զրկանք կամ  
թշնամութիւն ընել: Ա՛լ ամէն մարդ իր ըն-  
կերին վրայ պիտի վստահ ըլլայ՝ ճշմարիտ  
ու հաւատարիմ բարեկամի մը պէս, և ամէնքը  
մեկըզմէկ պիտի սիրեն եղբօր պէս:

Ա՛ն մարդը՝ որ ճշմարտապէս իր ընկերը  
կրտիրէ, իր ջանքովը ամէն բանի մէջ անոր  
ժամանակաւոր ու յաւիտենական բարու-  
թիւնը նայելու ետեւէ կը ըլլայ, և կախորժի  
աս բանը ընելու, մինչև անգամ անոր հա-  
մար ինքրզինքը նեղութեան մէջ ձգելու և  
իր անձը ուրանալու կը ըլլայ: Ի՞նչ որ դուք  
հիմայ իս սիրելու ըլլաք ձեր անձին պէս, ու-  
րախութեամբ դուք պիտի աշխատիք իմ օ-  
գուտս առաջ բերելու՝ չէ թէ միայն ժամա-  
նակաւոր օգուտս, հապա նաև իմ հոգևոր  
օգուտս: Այլ որչափ որ իմ անվախճան հոգիս  
էվելի պատուական է մարմինէս, ու իմ  
մարմնաւոր բարութիւններէս՝ և աս բոլոր  
աշխարհէս նէ, այնչափ էվելի պէտք է որ

դուք աշխատիք թէ որ իս կըսիրէք, փնտրուելով իմ հոգւոյս բարութիւնը ամէն ինծի վերաոնք եւալ բաներէն էվել: Աուք յօժարութեամբ ձեր բոլոր ջանքովը իմ փրկութիւնս ապահով ընելու պիտի աշխատիք, և պիտի յօժարէք աս բանը ընելու՝ անանկ որ ինչպէս մեր օրհնեալ Տէրը իր մարդոց տրդոցը վրայով ունեցած մեծ սիրոյն համար հաճեցաւ անոնց իր ողորմութիւնը ցուցնել, և մինչև անգամ ինքրդինքր խաչին վրայ մեռնելու տրաւ անոնց համար: Աւ ինչպէս որ մէկ բարի ու բարեգութ հայր մը համբերութեամբ ու կամու յանձնառու կը լայ աշխատելու ցորեկու գիշեր մէկ սիրելի զաւկի մը համար, այսպէս դուն ալ կարգացող՝ թէ որ իս կըսիրես, ուրախութեամբ կրցածիդ չափ իմ մարմնաւոր ու յախտնական աղէկութեանս համար ջանք պիտի ընես: Աւ որովհետեւ իմ անվախճան հոգիս հազար անգամէն աւելի իմ մարմինէս պատուական է, դուք պիտի զգաք նմանապէս էվելօք անոր փրկութեանը համար՝ քան թէ իմ մարմնաւոր առողջութեանս համար: Թէ որ դուք կրտեսնաք ձեր ընկերը կամ բարեկամը՝ արգէտ կամ հոգւոյն պէտք եղածը հոգալու ճամօէն դուրս ելած, աս ձեզի էվելօք նե-

ղուծիւն մը պիտի տայ, քան թէ տեսնալ  
անատեն անոնք հիւանդ կամ ցաւոտ՝ կամ  
մէկ մարմնաւոր նեղուծիւն մը քաշած :  
Ղուք պիտի ջանաք ամէն կերպով արժըն-  
ցունել անոնք իրենց անհոգութենէն, և ա-  
ռաջնորդել անոնք ճշմարտութեան ու կե-  
նաց ճամբան. պիտի աղաչէք անոնք՝ որ Մս-  
տուծոյ հետ հաշարվին. ինտոր Պօղոս կը-  
ղրուցէ Աորնժացիներուն. « Քրիստոսի  
կողմանէ ձեզ կաղաչենք, հաշարու թիւն ու-  
նեցէք Մստուծոյ հետ » : Թ. Արնժ. Ե. 20 :

Եւ ձեր սէրը պիտի առաջնորդէ ձեզի  
ինքրզինքնիդ Մստուծոյ յանձնելու ջերմե-  
ռանդ աղօթքով անոնց համար : Մս կեր-  
պով ամէն մարդ որ ճշմարտապէս իր ընկե-  
րը կըսիրէ, պիտի ընէ, և ան՝ չէ թէ սոսկա-  
պէս իր բարեկամներուն ու աղգականնե-  
րուն վրայ պիտի ընէ, հապա բոլոր մարդոց,  
մինչև անգամ իր թշնամիներուն ալ :

Պօղոս ինքը աս կերպով ըրաւ, որ կըսէ  
թէ « Պարտրկանութիւն ունիմ՝ Հոյներուն  
ու Քարբարոսներուն, նաև իմաստուննե-  
րուն ու անիմաստներուն » : Հուս. Կ. 14 :

Թէ որ մէկ մարդ մը հարցընելու ըլլայ՝  
ով է իմ ընկերս, մենք պիտի պատասխա-  
նենք որ՝ մեր Տէրը սորվեցուց մեզի՝ խօսե-  
լով ան մարդուն վրայով, որն որ գողերուն

ձեռքը ինկած վնասեր էր, ու մէկ Վամարա-  
ցիի մը հոգածու թեամբը բարեպէս դարմանե-  
րնդունել էր: Ասկից կերևայ որ մարդոցմէն  
ո՛ր և իցէ մէկը մեր ընկերն է՝ որ կրկուրօտի մեր  
գթու թեանը ու բարու թեանը, թէպէտ ին-  
քը թող մէկ օտար մը և մէկ այլազգի մը ըլ-  
լայ, և որ մեզի պէտք է ամէն մարդոց աղէ-  
կութիւն ընել որ և իցէ աղգէ թող ըլլայ՝  
որչափ որ ձեռվընուս կուգայ նէ: Աւ աս  
միտքին վրայ է Առաքեալին ան խօսքը որ  
կրսէ: «Աւստի կուզեմ որ աղօթքը՝ աղա-  
չանքը ու խնդրուածքը բոլոր մարդոցը հա-  
մար ըլլայ, ինչու որ աս է աղէկը ու ընդու-  
նելին Աստուծոյ մեր Փրկիչին առջևը: Ար  
ինքը աս կուզէ որ՝ բոլոր մարդիկ փրկովին՝  
ու ճշմարտութիւնը ճանչնալու գան»: ԹՎ  
ՏՎ . ք . 1—3 :

Հիմայ մենք ինքըզինքնիս աս բանին մէ-  
ջը քննեմք նայինք թէ, մենք որ Վրիս-  
տոնեայ կոչված ենք նէ աս կերպով կեր-  
թանք կոր մի: Արջանանք ու աղօթք կրնենք  
կոր մի ուրիշներուն աղէկութեը համար:  
Կամ թէ աս բանին համար բոլորովին փու-  
թաջան ենք մի: Մենք մեր Վրիստոնեայ  
եղբայրներուն փրկութիւնը չենք հոգար-  
կոր, հասցա ուր մնաց ուրիշներունը, ինչ-  
պէս և՛ հաճկրները ու Հրեաները: Մենք

անոնց համար աղօթք չենք ընել որ ոչ մեր և  
կեղեցիներուն մէջը ոչ ալ մեր տուները. հա-  
պա մանաւանդ անոնք կատենք: Ա՛ր են ան  
մարդիկները, որ աղօթք ընեն Տաճկընե-  
րուն ու շրեաներուն և շեթանոսներուն  
համար:

Շիմայ՝ ալ ամէն մարդ՝ որ կրկարդայ ա-  
ստեք, ինքիրմէն թող դատէ իր անձը աս  
կանոնովը, որպէս զի՛ ան կերպը ինքը կը-  
նէ՞ կոր մի ուրիշներուն, ինչպէս որ ինքը  
կուզէ որ ուրիշները իրեն ընեն. և ասկից  
ինքը թող խմանայ թէ՛ արդեօք Վրիսաոսի  
աշակերտն է մի ինքը:

Ե. Սեր Տէրը նաև աս պատուէրը տըւա-  
լիր աշակերտներուն՝ ըսելով թէ, “Վճենեին  
երգում մի՛ ընէք. ոչ երկինքի վրայ, ինչու  
որ ան Վստուծոյ ակթոն է. ոչ երկիրին վը-  
րայ, ինչու որ ան իր ոտքին գնելիքն է. ոչ  
Նշրուսաղէմի վրայ, ինչու որ մեծ թագաւո-  
րի քաղաք է. ոչ ալ երգում պիտի ընես  
զլխուդ վրայ, որովհետև դուն չես կէնար  
զլխուդ մէկ մազը ճերմակ ընել կամ սև, հա-  
պա միայն թէ՛ ձեր խօսակցութեանը մէջը  
իրաւ խօսքին համար Այո՛ պիտի զրուցվի,  
ու չեղած բանին կամ սուտին համար Չէ՛  
պիտի զրուցվի. ինչու որ ասկից էվելի կեր-

սոյ վ զրուցված խօսքը չարութենէն առաջ  
կուգայ” : Ստոր. ն . 34—37 :

Հիմայ մէնք ինքրզինքնիս քննենք նա-  
յինք աս պատուէրին վրայ՝ թէ, մենք՝ որ  
Վրիստոսի աշակերանները կրկոչվինք նէ,  
Վրիստոսի աս խօսքերուն կըհնազան-  
դի նք կոր մի՞ թէ չէ : Այ՛ մի որ՝ ամէն ասուն  
մէնք աս պատուէրը ռտքի տակ կառնենք  
կոր : Սենք չենք լսեր կոր մի, որ մարդիկ՝  
էրիկ մարդ ու կնիկ մարդ և տղաքները, աս-  
մէնքն ալ աս պատուէրը գրէ թէ ամէն ժա-  
մանակ ռտքի տակ կառնեն չին բռներ կոր :

Բան մը ծախու առած կամ ծախած աս-  
տննին և կամ խօսակցութեան մէջ առանց  
երգումի չեն անցնիր կոր, անանկ որ՝ ճամ-  
բան կամ մեր տուններուն մէջը՝ կամ ուր  
տեղ որ ենք նէ, ուրիշ բան մը չենք լսեր  
այնչափ շատ՝ որչափ որ կը լսենք Վստուծոյ  
անունը զուր տեղ առնելու խօսքերը : Ասե-  
լաւ մարդիկներ ալ սովորութիւն ըրած են  
իրենց ամէն խօսքերնին զրուցել երգում ը-  
նելով աչքերնուն կամ գլուխնուն վրայ, և  
կամ իրենց կեանքին և ուրիշ կերպ բանե-  
րու վրայ, որ անոնց ամէնը Վրիստոսի աս  
երևելի պատուէրին գէմ բաներ են, որ կը-  
սէ, “Վմենեին երգում մի՛ ըներ” :

Աւստի Հիմայ մէնք՝ որ մեր ընթանը այս-



չափ շատ անգամ երգումներ ընելու սովորում թիւն ըրած որ կրգտնանք նէ, ալ ի՞նչ պիտի խորհինք մեր վրայ. կրնանք ըսել թէ՛ Մենք Վրիստոսի աշակերտները ենք, որ իրենն աս պատուէրը չենք բռներ կօր :

Ասկէց՛ի զատ՝ հապա ո՞ւր թողունք որ, շատ մարդիկ շատ անգամ չէ՛ թէ մինակ երգում կրնեն, հապա սուտ տեղն ալ երգում կրնեն : Սուտ կրգրուցեն, ու ետքն ալ երգում կրնեն թէ խօսածնին ճշմարիտ է : Ստուծեան մեղքը անգամ մը կրգործեն, ու ետքը՝ դարձի գալու և անօր համար Աստուծմէ ներում խնդրելու տեղը, կրգառնան Ստերգմուծեան մեղքին մէջն ալ կկոնան՝ մարդոց աչքին առջևէն իրենց ստուծիւնը ծածկելու համար :

Վրիսոս, կրկարծե՞ն մի ատ մարդիկը, որ սուտ խօսելով և երգում ընելով, ու ասանկով մարդիկները խաբելով՝ կրնան ան Ամենամեծ Աստուածը խաբել, որ ինքը կրքննէ անոնց գործքերը ու իրենց սրտին մէջինները, և ամէն բան դատաստանի մէջ յայտնի պիտի ընէ : Այամ թէ ամենեւին հոգերնին չէ՞ մի, որ Աստուած ի՞նչ կրխորհի արդեօք իրենց վրայ. կամ ի՞նչ սարսափելի փոխատրուծիւն մը պիտի ըլլայ իրենց ան ըրածներուն դէմ հանդերձեալ աշխարհին մէջը :

7. Մեր Տէրը պատուիրեց իր աշակերտին ձեռքովը թէ, «Պէտք է որ մենք սուս զրուցելը մեկդի ձգենք. և ամէն մարդ ճշմարտութիւն խօսի իր ընկերին հետը»: Եւր. 7. 25:

Հիմայ եկէք մենք ինքրդինքնիս քննենք աս Մարտիրոսի խօսքերուն վրայ թէ մենք աս պատուէրը կրբոնենք կոր մի: Մեր են ան մարդիկը որ միշտ ճշմարտութիւն խօսին, անանկ որ մենք իրենց խօսքին վրայ կրնանք հաստատուիլ: Հարուրին մէջը մէկը կայ արդեօք, որ ազատ ըլլայ ստութեան մտութենէն: Մեր է ան մարդը որ էվելօք ճշմարտութիւն խօսելուն վրայ խորհի քան թէ քանի մը ստակ էվելի վատրկելու վրայ:

Հիմայ Մատուծոյ խօսքը ին ու Նոր Կտակարանին մէջը՝ յայտնապէս կրսորվեցունէ մեզի թէ ամէն ստութիւնը ու խարեութիւնը չէ թէ միայն դէշ է, հապա որ անտարակոյս մարդը կործանման մէջ կրտանի:

Դաւիթ Սաղմոսին 87 գլխուն մէջը կրսորվեցունէ թէ, անոնք՝ որ պիտի բնակին Մատուծոյ Սուրբ լեռանը վրայ, (այսինքն որ պիտի մտնան իր թագաւորութեանը մէջ), անանկ մըն են՝ որ սրտերնուն մէջ ճշմարտութիւն կրխօսին: Աւ հինգերորդ

դիւսուն մէջ կըզըուցէ՝ թէ, Մտուած պիտի  
 դատապարտէ ան ամէնը՝ որ սուտ կըխօսին :  
 Եւ Յայտնու թեան գիրքին մէջ՝ անտեղ՝  
 ուր որ ան Սուրբ Քաղաքին Երկնաւոր  
 Երուսաղէմին վրայով կըխօսվի, Հիսուս  
 Քրիստոս կըզըուցէ թէ, «Մտոր սուտ զը-  
 րուցները (հոն չի պիտի կրնան մտնալ, հա-  
 պա) իրենց բաժինը ան լծին մէջը պիտի ու-  
 նենան՝ որ կրակով ու ծծումբով կէրի, որ  
 աս է երկրորդ մահը» :

Ընանկ է նէ՝ թող հիմայ ամէն ասիկա  
 կարգացողը կանկ առնէ աստեղ, ու թող  
 մտմտայ թէ ինքը սովորութիւն ըրած չէ՞ մի  
 աս մեղքը գործածելու. և թէ որ ինքը ունի  
 նէ, անոր համար վտանգի մէջ չէ՞ մի որ իր  
 բաժինը կրակէ լիծին մէջը պիտի ունենայ :

Է. Քրիստոսի պատուէրներուն մեզմէ  
 պահանջած մէկ ուրիշ բանն ալ աս է որ,  
 մարդիկները՝ «Պէտք է որ Մտուածոյ երկիր-  
 պագութիւն ընեն հոգիով ու ճշմարտու-  
 թիւնով» : Յոհ. 7. 24 :

Մեր Տէրը սորվեցուց որ, սոսկապէս  
 լեզուին ըրած փառաբանութիւնն ու ձայ-  
 նաւոր աղօթքը բաւական չէ. և աս կերպ  
 լեզուով պաշտօն մատուցանելը Մտուածոյ  
 ընդունելի չէ : Եւ ինքը սաստիկ կշտամբեց  
 շրեաները՝ անոնց աս կերպ լեզուով ու չէ

Թէ սրտանց ծառայութիւն ընելնուն հա-  
մար, ըսելով թէ՛ “ Այլէկ մարգարէութիւն  
ըրաւ ձեր վրայ Ասայի, որ ըսաւ, Աս ժո-  
ղովուրդը իրենց բերանովը ինծի մօտ են,  
ու իրենց պոկունքներովը կը պատուեն իս.  
բայց իրենց սիրտը հեռացած զատված է  
ինձմէն: Պարտապ տեղը իս կը պաշտենկոր.  
մարդոց խօսած վարդապետութիւնները  
կը սորվեցունեն”: Մատթ. ԺԵ. 8, 9:

Թէ որ Աստուած մեզի պէս ըլլար նէ,  
կարելի է որ՝ սոսկ արտաքին երկիրպագու-  
թիւններով ինքը կշտանար, ու անոնք ի-  
րեն բաւական սեպէր. բայց ինքը մեզի պէս  
չէ, անիկա մարդուն սիրտը կը նայի: Աս-  
տուած մէկ հոգի մըն է, և ինքը մէկմէ հո-  
գիով եղած երկիրպագութիւն կուզէ.  
Մեր բրած պաշտօնը սրտին ծառայութիւ-  
նովը պիտի ըլլայ, ան մէկ հոգեւոր ծառա-  
յութիւն մը պիտի ըլլայ:

Վանք որ հիմայ եկեղեցիներուն մէջը  
ըստ մեծի մասին ի՞նչպէս երկիրպագու-  
թիւններ ու պաշտօններ կը ըլլին կոր: Աւ-  
երկիրպագութիւն բրած ժամանակնիս  
ներսիդինուս կիմանանքկոր մի՞ որ մենք ան  
մեծ և ահաւոր Աստուծոյ առջևը կայներ  
ենք, որ սրտերնիս ու միտքերնիս կը-  
բնենէ: Անոր առջևը կեցե՛ր ենք մի, կամ

անոր կուգանք կոր մի մեծ յարգութիւնով  
 ու աստուածապաշտութեան երկիւղովը :  
 Սեր զրուցած աղօթքը հողիով ու մտքով  
 է մի : Վլխաւորապէս մեր հոգը աս կը լլայ  
 կոր մի, որ մեր սիրտերը մաքուր ու սուրբ  
 ր լան, և մեր ըրած երկիրպագութիւնը  
 հոգեոր ու ընդունելի եղած ըլլայ Մատու-  
 ծոյ առջևը : Ամ թէ էվելօք մեր ջանքը ու  
 հոգը չըլարկոր մի, որ ան ինչէիցէ արարո-  
 ղութիւնը որ պիտի ընենք՝ շուտով լմն-  
 ցունենք տեղերնիս երթանք : Աւ շատ ան-  
 դամ երբոր եկեղեցիին մէջ կը ժողվըվինք,  
 և Մատուծոյ ներկայութեան առջևը կը լ-  
 լանք աղօթքի ժամանակնէ, արդեօք չե՞նք  
 մի աչվրնիս չորս կողմերնիս ձգեր ու նայիր .  
 և մեր քովիններուն հետը խօսակցութիւն  
 չե՞նք մի ընե՞ր՝ ու իրարու հագուստներուն  
 վրայ նայիր, անանկ որ՝ ամենեկին հոգեր-  
 նիս չըլար թէ Մենա.մեծ Մատուծոյ առ-  
 ջևս ենք, և չենք նայիր թէ սրտերնիս շի-  
 տակ են մի՞ թէ չէ : Աւ երբոր Մե տարանը  
 կը կարգացվի նէ, մենք լսողներս՝ արդեօք  
 աղէկ ականջ կը դնենք մի անոր՝ որ Մատու-  
 ծոյ խօսքն է, ու չէ թէ մարդու խօսածը : Մն  
 խօսքերէն մենք սորվելու կը նայինք մի թէ  
 ինչ է Մատուծոյ կամքը, ինչ է մեր պար-  
 տաւորութիւնը, և ինչ պէտք է ընել մեզի

որ փրկելիքն է : Այլ երբ որ տուններն իսկ երթանք , միտքերն իսկ իրերն <sup>նք</sup> մի է վերջոք ան Մատուածային ազդարարութիւնները որ մենք լսեցինք , որչափ որ մենք կրօնիչնք աս կամ ան մարդուն ըսածը , և թէ ինչպէս աս կամ ան մարդը հազմեր էրնէ :

Այրբ որ մեր աղօթքը զրուցելու կը լլանք նէ , ինչպէս անհոգութիւնով ու արտորնօք կը սենք անիկա , չի խորհելով մեր ըսածներուն զօրութեանը ու իմաստին վրայ , հապա կը կարծենք թէ միայն մեր “ Շատ խօսելովը աղօթքն իսկ լսելի պիտի ըլլայ ” : Ստալ . 4 . 7 :

Այլ ասկէց ՚ի զատ , դուցէ ան ժամանակ կը սիրտերն իսկ ատելութիւնով , նախանձութիւնով , չարութիւնով և այլն , լիցված են , և աստիկով մեր աղօթքները ընդունելի կը լլան մի Մատուածոյ , որ ինքը մեզմէ կը պահանջէ աղօթք ընել իրեն մէկ ներող սրտով մը մեր պարտականներուն վրայ :

Մեր Տէրը մեզի պատուիրեց նաև՝ որ ծածուկ աղօթք ընենք . ըսաւ , “ Այրբ որ դուն աղօթք պիտի ընես , մտիր քու խուցդ , ու դուռդ դոցէ , և գաղտուկը եղած քու շօրրդ աղօթք ըրէ՛ դուն . ու քու շայրդ՝ որ ծածուկը կը տեսնայ , քեզի յայանի հաստցումը կը ընէ ” : Ստալ . 4 . 6 :

Հիմայ ըրչափ կան արդեօք, որ գաղ-  
տուկ աղօթք ընելու սովորութիւն ունին .  
կամ որ կրօնիքն իրենց խօսցին մէջ մինակ  
ըլլալ օրը մէկ ժամ կամ կէ, ժամ, սիր-  
տերնին Մատուծոյ առջևը բանալու համար,  
մեղքերնին անոր առջևը խոստովանելու  
համար, և իրմէն թողութիւն խնդրելու  
համար. փ սոք տալով իր անունին, և կար-  
գալով Մեծաարանը ու լսելով իր սրբազան  
խօսքերը :

Իսայ առաջին սուրբերը սովորութիւն  
ունէին գաղտուկ աղօթք ընելու, ինչպէս  
որ Վառիթ որ ինքը Տէրօջը օրէնքն բուն  
վրայ կը հաճէր, կը զրուցէ թէ “ Այս իրի-  
կուն ու առտու և ցորեկը Մատուծոյ աղօ-  
թեցի, ու Տէրը ինձի լսեց ”: Սալմ. ծի .  
18: “ ()րբ եօթը անգամ պիտի փառաբա-  
նեմ քեզ Տէր քու արդար դատաստանիդ  
համար ”: ՃԺԸ. 164: Վանիէլ մարգարէն  
ալ սովորութիւն ունէր իր սենեակը մանալ  
օրը իրեք անգամ, և աղօթք ընել երկնեց  
Մատուծոյն: Ալ մեր Տէր Հիսուսն ալ իր  
մարգեղութեանը ժամասակը կտիրէր հե-  
ռունալը ու առանձին աղօթք ըն' լը. ու ստի  
մեղի ալ պէտք է որ աս մասին մէջ իր օրի-  
նակին հետեինք:

Հիմայ ան որ առանձին աղօթք ընել չի

սիրեր , կրնայ մի ինքը մէկ հոգևոր մարդ մը  
 ըլլալ . ոչ ալ ինքը Վատուծոյ երկիրպագու-  
 թիւն ըրած կըլլայ հոգիով ու ճշմարտու-  
 թիւնով :

Վանք որ Վատուած չէ թէ միայն աղօթ-  
 քի ժամանակ մէզմէ կըպահանջէ անկեղծու-  
 թիւն և ուղղութիւն սրաի , հասցա ամէն  
 ժամանակ մեզի պէտք է չար խորհուրդնե-  
 րէն ու ումէն կերպ սրաէն անցած մեղքի բէն  
 զգուշանալ : Ինչու որ ինքը մեր սիրակերը  
 կըքննէ ամէն ժամանակ , և չէ թէ միայն  
 սոսկ մեր աղօթք ըրած ատենը :

Եւ Վատուծոյ աչքին առջևը “Մն որ իր  
 եղբայրը կատէ մարդասպան է” : Եւ “Մն  
 որ կնայի մէկ կնկան մը անոր ցանկանալու  
 համար նէ , ալ ինքը իր սրաին միջ անոր  
 հետ շնութիւն ըրած կըլլայ” : Վիսոս ուրե-  
 մըն , մեր միջը որ Վրիստոնեանէք ըսված  
 ենք , հասցա որչափ մարդասպաններ ու շը-  
 նացողներ կան : Մենք կուզենք որ մարդիկ  
 մեր մտայ ազէկ կազծիք ունենան , և ինքը-  
 զինքնիս սգտաքին երևոյթքով արգաք  
 մարդոց պէն ըլլալ կըցուցրենք . բայց սըր-  
 տիս մարքութեանը համար հոգևորիս շըլ-  
 չար ու ան չենք փնտրուեր : Մեր Տէրը ա-  
 սանկնե բուն կըզրուցէ , “Ասի ձեր գլխուն ,  
 ցատաճառն որ բունով ճարմըլցած գերեղ-



մաններուն կրնմանիք . որոնք իրացրնէ  
 դուրսէն գեղեցիկ կերևան , բայց մէջը լե-  
 ցուն են մեռելներու ոսկորներով ու ամէն  
 կերպ անմարդութիւնով : Ստու. իմ. 27 :

Մ. Քրիստոսի պատուէրներուն մէկ ու-  
 րիշն ալ աս է , “Քննեցէք Սուրբ Վիբրը .  
 որովհետեւ դուք անոնցմով կրտսպէք թէ  
 յաւիտենական կեանքը ունիք” : ՀՅՆ. Ե 39 :

Հին ու՛ Սոր կտակարանները որ Սուրբ  
 Վիբր կրավին , Մտուծոյ կամքին յայտ-  
 նութիւնը կը պարունակեն իրենց մէջը : Աւ-  
 կան անոնց մէջը ան կանոնները , որոնցմով որ  
 պէտք է մեզի վարվիլ . և անանկ խրատներ  
 կան , որոնց մեր փրկութեանը համար  
 պէտք է մեզի որ հետեւինք : Մնոր համար  
 մեզի էփելօք հարկաւոր է որ գիտնանք ամե-  
 նը , որ Սուրբ Վիբրէրը իրենց մէջը կը պա-  
 րունակեն :

Մէն քաղաքի մարդոցը հարկաւոր է որ  
 գիտնան թէ որոնք են ան իրենց վրայ եղած  
 իշխանութեանը օրէնքները , որ իրենք ալ  
 կրնան ան օրէնքին պահանջածին պէս ընել ,  
 ու անոր արգիլած բաներէն զգուշանալ : Աւ-  
 երբոր քաղաքին մէջը հրատարակութիւն  
 մը կը լսայ կառավարութեան կողմանէ նէ ,  
 ամէն մարդ պէտք է որ լսէ ու հնազանդի  
 ան պատուէրը քարոզողին , անանկ որ իբր  
 թէ թաղաւորը ինքը է որ կը քարոզէ ան

պատուէրը : Այլ թէ որ մէկ մարդ մտիկ չընէ  
 հասկընալու ան պատուիրած բանը , վերջը  
 անգիտութիւնը ան պատուէրին մրայովը  
 գինքը անմեղադիր կրնայ մի ընել օրէնքին  
 անհնազանդ գտնելու ատենը . չէ . քաւ լի-  
 ցի : Ինքը անշուշտ յանցաւոր եղած է չէ թէ  
 միայն օրէնքը չի բռնել լուսն համար , հապա  
 նակ թագաւորին իշխանութիւնը արհա-  
 մարհելուն համար :

Վանք որ թագաւորն ըն թագաւորը  
 ու տէրերուն Տէրը իմացուց մարդոց իր  
 կամքը Սուրբ Վերքին մէջը . և ինքը կը պա-  
 պահանջէ մեղմ որ մենք ան Սուրբ Վերքը  
 քննենք , որով կարենանք գիտնալ իր կամ-  
 քը և կատարել ան իր պատուէրները : Այլ  
 թէ որ մեղի հարկ է հասկընալ մեր ժամա-  
 նակաւոր թագաւորին հրովարտակը նէ ,  
 հապա որչափ հարկաւոր է որ մենք գիտ-  
 նանք Սուրբ Վերքին մէջի պարունակված  
 խօսքերը . որովհետեւ անոնք Վճենամեծ  
 թագաւորին հրամաններն են , որ ինքն է  
 միայն Վճենակարող Վրարիչ՝ ու երկնի և  
 երկրի պատավարը , և որովհետեւ մեր հո-  
 գիններուն դժբխքին կրակէն խալըսիլն ալ՝  
 իր կամքը գիտնալուն ու կատարելուն վրայ  
 կապված է : Այնք ալ իր կամքը կատարե-  
 լապէս գիտնալը միայն աս Սուրբ Վերքէն  
 կրնանք ունենալ :

Ուստի նայեցէք հիմայ՝ տեսէք մարդոցը  
 քործքերը Սուրբ Վիրքին վրայով . ի՞նչ-  
 պէս անհոգ եղած են սորվելու աս պատուա-  
 կան Վիրքը : Արչափ քիչ որ են որ կրկար-  
 դան ու կըքնեն աս Վիրքը : Այն անոնք՝ որ  
 չեն կրնար կարդալ , որչափ քիչ կաշխատին  
 սորվելու , կամ խանանկ մէկ մը գտնուելու՝ որ  
 կարդայ ու բացատրէ իրենց ան Սուրբ  
 Վիրքը : Աւերբոր եկեղեցիին մէջ Մատու-  
 ծոյ խօսքը կրկարդացվի , անոր ջերմեռան-  
 դութեամբ մտադրութիւն ընողները նը-  
 չափ քիչ են :

Մտաւոր առաւելում շատ մարդիկներ  
 չեն գիտեր թէ ի՞նչ գրված կայ Մատուա-  
 ծաշունչ Սուրբ Վիրքին մէջը :

Ոչմտրիտը խօսելով մեզի արժան չէ որ  
 աս կերպը ըլլայ : Յիսուս Քրիստոս պա-  
 տու իրեց մեզի որ Սուրբ Վիրքը քննենք :  
 Ուստի անոնք՝ որ հոգ չեն ընել որ Մատուա-  
 ծաշունչը կարդալու ու քննելու , Քրիս-  
 տոսի աշակերտները կրնան մի ըլլալ :

Եւ , որչափ տարբեր է աս մեր գործա-  
 ծած կերպը Վաւիթի ան խօսքէն որ կրսէր  
 Մատուծոյ , « Ինտոր սիրեցի ես քու օրէնքդ  
 ամենիժիր անոր լըսայ էր իմ գրուցս : Ինտոր  
 քու խօսքերդ անուշիկ են իմ բերնիս մէջը .  
 անոնք իմ բերնիս մէջը մեղրէն էվել են :

Վրոբերնիդ պատուէրները ինծի ոսկիէն ու  
արծաթէն հաղար անգամ էվելի աղէկ են :  
Վուխօսքդ իմ ոտքերուս ճրագ մըն է , ու  
իմ ճամբաներուս կանթեղ մըն է : Մտոր  
համար ես քու պատուիրանքներդ սիրեցի  
ամէն կերպ ոսկիէն ու գոհարէն էվել” : Սող  
ՃՃԸ . 97 , 103 , 72 , 105 , 117 :

Մհա ասանկ սիրով Վաւիթ սիրեց՝ ու  
սորվեցաւ Մտուծոյ խօսքերը : Աւ ասանկ  
պէտք է ամէն Վրիստոնէին որ սիրէ ու  
սորվի Մտուծոյ պատուէրները , եթէ ինքը  
ան Տէրոջը աշակերտն է նէ , որն որ կրօք ,  
“Վննեցէք Սուրբ Վիրքը , որովհետեւ ա-  
նոնցմով կրխորհիք որ յաւիտենական  
կեանքը պիտի ունենայք” :

## ՀԵՏԵՒՈՒԹՒԻՆ :

Մոջի երեսներուն մէջը Տէր Հիսուս  
Վրիստոսին մէկ քանի պատուէրներուն  
վրայ քննութիւն ըրինք , և անոնք բաղդա-  
տելով մեր վարքին ու սովորութիւններուն  
հետը որ իրեն աշակերտները կոչված ենք ,  
գտանք մէկ աղետալի աննմանութիւն մը :

Կերևակոր թէ մենջ որ Վրիստոնեայ  
կրկոչվինք , Վրիստոսի պատուէրներուն  
չենք հնազանդիր կոր , ուր մն հիմայ մենք  
ինքրզինքնիս կրնանք քննել Մտաքեալին

տըւած խրատովը , և կրնանք ստուգիւ հաս-  
տատել թէ մեւք նոյն հաւատքին մէջն ենք  
մի , և թէ չ) հսուս Վրիստոս մեր մէջն է  
մի , կամ թէ մենք դատապարտուած ենք  
մի :

Եկորես քեզի հարցունեմ կարգացող ,  
թէ գուն Վրիստոսի աս պատուէրն երբ ո-  
րոնց վրայ որ խօսվցաւ մինչև աստեղ ,  
կրբուննս կոր մի : Թէ որ չէնէ , ինչ պիտի  
խորհիս դուն քու վրայովդ . յայտնի է որ  
դուն Վրիստոսի աշակերտը չես , և ճշմա-  
րիա Վրիստոսնայ չիս հապա անունով  
միայն : Եսանկ քեզի պէս եղողն երուն դէմ  
մեր Տէրը լըբուցէ . “ Ինչո՞ւ համար իս Տէր  
Տէր կըկանչէք , ու իմ ըսածն երս չէք ըր-  
նէր ” :

Եստուծոյ պատուէրն երբ մեզի արված  
են որ մենք անոնց հնազանդինք . հիմայ թէ  
որ մենք անոնք կանարգենք ու չենք հնա-  
զանդիր նէ Վրիստոսի , յոյս մը կրնանք  
ունենալ որ ինքը մեզ կըփրկէ . չէ : Վան-  
զի Վրիստոս ինչը լըաւ հեղինակ յաի-  
տենասկան փրկութեան . որոնց , ան ամե-  
նուն որ իրեն կըհնազանդին . ուր մն միայն  
անոնք որ իրեն կըհնազանդին կրնան փր-  
կըվել Եւր . Ե . 9 : Եսանկ նաև Մովսէս ը-  
սաւ Վրիստոսի դալըստեանը վրայ առա-

ջուց խօսելովը, “Աւ թէ որ մէկ հողի մը ըլլայ որ ան Սարգարէին մտիկ չընէ, պիտի կորսըմի անիկա ժողովուրդին մէջէն” :  
Կոր. Գ. 23 :

Եւ Տէր Յիսուս կը զրուցէ. “Մէկ մարդ մը որ կը լսէ աս իմ զրուցած խօսքերս ու չի բռներ անոնք, պիտի նմանի մէկ յիմար մարդու մը որ իր տունը աւաղի վրայ կը շինէ. անձրևը կիսնջնայ ու հեղեղ կելայ, և հօվը կը փրչէ ու տանը կը զարնէ. և կը կործանի. ու ալ անոր կործանումը մեծ է” :  
Մարկ. Է. 26, 27 :

Կաննկ էնէ ալ մենք աստեղ մէկ էլի ի երկիւղալի հետևութեան մը հասանք. ալ եկէք կաննկ առնենք՝ ու մամլտանք ասոր վրայ : Բ. Եսայանի եղաւ որ շատ մարդիկ որոնց հետ աս մենք ենք, ինքքզի քնին Վրիստոնեայ կանչելով բոլորովին զուրկ են եղեր ճշմարիտ Վրիստոնէութենէն, և Վրիստոսի կրօնքին պէս չեն երթարկոր : Եւ շարունակ աս վիճակին մեջը կենալով անկարելի բան է իրենց փրկութիւն գտնալը : Սոսկալի բան չէ՞ երբոր խորհինք թէ մենք և ուրիշ շատ մարդիկը որ Վրիստոնեայ կը կոչվին, աղօթք կընեն, պահք կը բռնեն, սուրբ տեղվանքը ու խաի կը թան, և այլն, բայց Տէր Յիսուս Վրիստոսին

պատուէրները չեն բռներ : Աւ աղետալի  
 քան չէ՞ որ կրօնականք թէ մենք թագաւո-  
 րութեան որդիք ենք . բայց երբոր սրբու-  
 թեան կշառքովը չափվինք՝ պակաս կը գրա-  
 նարվինք , և կշտամբնալ եղած կը լլանք , և  
 անանկ ըլլալով Տիմայ կործանման ճամբուն  
 մէջն ենք :

Ըստ Տիմայ՝ դիցուք թէ , մէկը հարցունէ  
 թէ ի՞նչ կրնանք ընել : Աստիճան պատաս-  
 խան կուտամ Պետրոս առաքեալին խօսքե-  
 րովը , “ Օղջացէք ու դարձի եկէք , որ ձեր  
 մեղքերը ջնջուին ” : Վարժ . 7 . 19 : Ըստ ինքն  
 Պէտրէ որ մենք մեր ամէն մեղքերէն դառ-  
 նանք , բոլոր կեղծաւորական արարողու-  
 թիւններէն դառնանք , արտաքին նշաննե-  
 րովը չի շարժինք , հապա ինքը շինքնիսնա-  
 յինք որ՝ ճշմարիտ ու հնազանդ սրտով  
 Տէր Յիսուս Քրիստոսի քալած ճամբուն  
 ետեէն երթանք . և իրմէն սորվինք սն խօս-  
 քը՝ որ կրսէ , “ Ահէք ինձի դուք ամէնքնիդ՝ որ  
 հոգնած էք ու ծանր բեռներու տակ , ու ես  
 ձեզ հանգստացունեմ . Իմ լուծս վրանիդ  
 առէք դուք , ու ինձ մէն սորվեցէք , ինչու որ  
 ես մէկ խոնարհ ու սրտովս հեղահոգի մըն  
 եմ , և ձեր անձին հանգստութիւնը գրա-  
 նաք ” : Ասե ինքը կը գրուցէ , “ Թէ որ մէկ

մարդ մը ինձի ծառայութիւն կրնէ, թող  
 իմ ետեւէս գայ. ու թէ որ մէկ մարդ մը իմ  
 ետեւէս կուգայ՝ թող ինքըզինքը ուրանայ,  
 ու իր խաչը (այսինքն ամէն իժիր Վրիստո-  
 սի համար իր քաշած նեղութիւնը) առնէ ու  
 իմ ետեւէս գայ” :

Բայց աս դիւրին բան չէ. մարդ մը թող  
 չի խորհի որ կրնայ իր խաչը առնել, ու Վր-  
 րիստոսի ետեւէն երթալ թէ որ Վստուծոյ  
 շողին իրեն շօգնէ, և թէ որ կատարելա-  
 պէս իր սիրտը շինորոգվի. իրաւ ջրնէ՛ պէտք  
 է որ սիրտը նորոգվի : Արուհեաւ բոլոր  
 աս խարէութիւնները յառաջ կուգան մէկ  
 խանգարեալ չար սրտէ մը. ինչպէս որ Յի-  
 սուս ըսաւ թէ՛ “Արտէն դուրս կուգան չար  
 խորհուրդները, շնութիւնները, պոռնը-  
 կութիւնները, սպանութիւնները, գողու-  
 թիւնները, չարակնութիւնը”, և այլն : Այ-  
 ինչպէս որ անկարելի բան է որ մէկ ապա-  
 կանեալ ծառ մը աղէկ պտուղ բերէ, անանկ  
 ալ անկարելի է որ մէկ խանգարեալ սիրտ  
 մը աղէկ սուրբ հնազանդութեան պտուղ-  
 ներ յառաջ բերէ : Վմէն մարդ աշխարհ կը-  
 ծրնանի մէկ խոտորնակ գէշ սրտով մը, որ  
 հակամիտութիւն ունի բոլոր գէշ սովորու-  
 թիւններու, և հակառակ է բոլոր աղէկ բա-



ներու , ասանկ ինքը կրմնայ մինչև որ իր  
սիրտը նորոգվի , և ինքը ըլլայ Մուսթափալի  
ըսածին պէս “ Ա՛հ կ'նոր. արարած մը” և ու  
գոյն Սրբոյ զօրու թիւնովը :

Ըս նոր արարած ու թիւնը ան է որ մեր  
Տէրը հասկըցուց աս խօսքով , “ Թէ որ մէկ  
մարդ մը նորէն չի ծընի անիկա չի կրնար  
Մատուծոյ թագաւորու թիւնը տեսնալ ” ,  
Ըհա աստեղ է ան մեծ ու զօրաւոր փոփո-  
խութիւնը որ պիտի ըլլայ մէկ մարդու մը  
ներսիցին փրկութեան համար . Ըս փոփո-  
խութեանը վրայ շատ անգամ խօսված է  
Սուրբ Գիւրքին մէջը . որ աս երբեմն կրավի  
մէկ նորոգութիւն մը . ինչպէս , “ Աոր եղիք  
ձեր մտքին նորութիւնովը ” . Ըտո՛՛մ . ԺԷ . 2 :  
Երբեմն կրավի մէկ նոր ծնունդ մը , որ անով  
մենք Մատուծոյ որդիքը կը ըլլանք . ինչպէս ր  
Ընոնք որ (Քրիստոս) ինչ ը ընդունեցին  
անոնց աս զօրութիւնը տրւաւ որ Մատու-  
ծոյ որդիք ըլլան . . . Ար ասոնք ոչ արունկ  
ծնած են , և ոչ մարմինին կամէն , ոչ ալ  
մարդու կամքէ , հասցա Մատուծ մէ ծն սծ ” .  
Յոհ . Կ . 12 , 13 : Ըս փոփոխութիւնը կը  
բաղդատովի նաև մեռելներուն յարութեա-  
նը . ինչպէս , “ Աւ ձեզ՝ որ ատեն մը մեղքի  
մէջ . . . մեռած էիք , ողջընցուց ինք իր անձու

վը" : "Մնոր հետ մկրտութեան ատենը  
 թաղվեցաք . ու անով իր հետն ալ Յարու-  
 թիւն առիք ան հաւատքովը որ Մատուած  
 ձեզի աղգեց" : Աողոս . ք . 13 , 12 :

Արեմն յայտնի է որ՝ մէկ մարդու մը ա-  
 նանկ փոխախլը որ մէկ նոր արարած մը ըլ-  
 լայ , ու ճշմարիտ հնազանդութեամբ՝ Քր-  
 իստոսի հետևող մը ըլլայ , մէկ մեծ փոփո-  
 խութիւն մըն է : Այս աս կերպ փոխախլը մար-  
 դուս կարողութենէն բոլորովին դուրս բան  
 մըն է : Մ'ս մարդուս ներսիդին անանկ փո-  
 փոխութիւն մըն է , որ առանց Մատուծոյ  
 Հոգիին զօրութեանը չի կրնար ըլլալ : Մ-  
 սոր համար դուք՝ թէ որ կուզէք ձեր սրտին  
 աս հոգևոր նորոգութեանը փորձը ընել նէ ,  
 պէտք է որ ինքրզինքնիդ Մատուծոյ յանձ-  
 նէք՝ աղօթքով իրմէն խնդրելով , որ իր  
 Պուրբ Հոգին ձեզի խրկէ միտքերնիդ լու-  
 սաւորելու՝ ու սիրտերնիդ՝ Աոր ընելու : Մ'ս  
 կերպովը՝ Վառիթ աղօթքըրաւ՝ երբոր ին-  
 քը մեզքի մէջ ինկած էր նէ , որ իմացալ թէ  
 ինքը զօրութիւն չունէր ինքրզինքը խալը-  
 սելու՝ կամ իր սիրտը մեղքի արատներէն  
 մաքրելու , խնդիրքըրաւ Մատուծոյ՝ ըսե-  
 լով , " Ավ Մատուած՝ իմ ներսիդիս մա-  
 քուր սիրտ մը ստեղծէ , և մէկ ուղիղ հոգեկ

Տը նորէն իմ ներսիդիս շինէ : Սաղ. Ծ . 12 :

Մատուած ալ իր ողորմութեամբը խոստացեր է տալ իր Սուրբ Զոգին իրմէն խնդրողներուն : Մ<sup>ս</sup>իկա է բոլոր իր բարութիւններուն ամէնէն մեծը , որ Տէր Հիտուս խոստացաւ իր աշակերտներուն : Մ<sup>ս</sup> է ան մեծ բարութիւնը՝ որ կերևայ աս պատուական խօսքերուն մէջը . “ Ինդրեցէք ու պիտի ընդունիք , փնտրեցէք՝ ու պիտի գտնաք . չալեցէք՝ ու պիտի բացվի ձեզի : ” Ձեր մէջէն մէկ մարդ մը , անկէց որ իր զաւակը հաց ուզէ նէ , քան մի կուտայ անոր . կամ թէ որ ձուկ ուզելու ըլլայ՝ նէ օձ մի կուտայ անոր : Ուստի եթէ գուր որ չար էք նէ , գիտէք ինչպէս աղէկ աղէկ բաներ տալը ձեր աղոցընէ , հապա որչափ էվելօք ձեր ևրկնաւոր Զայրը պիտի տայ Սուրբ Հոգին անոնց՝ որ ան իրմէն կը խնդրեն նէ ” : Մ<sup>լ</sup> մենք իրաւունք ունինք ապաւինելու ու քաջութեամբ յուսալու աս աստուածային խոստմանը նայելով , որ ինքը կը խրկէ մեզի ալ ան Սուրբ Զոգին աղօթքով խնդրած ատեննիս , ինչպէս որ ինքը Պէնտեկոստէին օրը իր աշակերտներուն խրկեց , երբ որ իրեք հազար հոգի ան Զոգին զօրութիւնովը սրտերնուն մէջ մէկ նորութիւն մը տացան , որ իրենց մեղքերնուծ .

եւ զարձան՝ ու ճշմարիտ հաւատացեալներ  
եղան Վրիտանոսի :

Նմանապէս ով որ կը խնդրէ խոնարհա-  
ղօթիչով սո սրհնեալ պարգևը՝ նէ պիտի  
տանէ ան :

Կարգացող՝ սո կերպով ահա գուն կըր-  
նաս ըլլալ ճշմարտապէս “Նոյն հաւատքին  
մէջը” . և սասնկով պիտի ըլլաս արդեամբ  
ու ճշմարտապէս Վրիտանոսի աշակերտը :  
Ար իրեն արժան է տալ փառք ու պատիւ և  
փառարանութիւն յաւիտեանս . Ըմէն :















